*բանալ եւ յոլով նախատանօք նախատել կամ զտարոյն բոլոր պահքն ի·ժ· օր բերել, որ պս· քո գրել· կանոնս էր· կամ զամուսնուի· ―ի (աշխարհի) քհյի· բանալ եւ զոչ արժանիսն քահանայագործութե· ի քհնյուի· եւ ի գործ սբ· խորհրդոյն ածել: Դու քով խորհելովս զքեզ ի միջի քո եղբարցս եւ ի քո գլխոյն եւ յա· եկեղցոյ· որոշեցեր, որիչ առանձին կանոնադրութբ·: Այլ զի գրել· էիր ի գրի ասս, թէ վսն· ընդունայնութե· կենցաղոյս ոչ է պարտ զճշմարտութին· վաճառել· վսն· այն համարձակեցաք զայս գրել եւ դու ինչ մի իսկ մեղադրել: Եղբայր յեղբօրէ զրկեալ պարտ է տանել ա· զայրացման: Թէ դու այնպէս գիտուն եղար, որպս· կարծես զքեզ կամ քոյքդ որպս· պարծիս հանապազ, եւ խրոխտացել· ես առջի· իշխանաց· պարտ է քեզ գալ եւ խորհրդաբար ը· մեզ խօսել, ի խորթ գիտուեցս· զմեզ զգուշացուցանել եւ հարազատին խելամուտ առնել, ապայ թէ ոչ ես այնպէս, այլ մի բան կամ երկու գիտացել· եւ զինքն ի լրոյ եւ ոչ յընթերցմանէ, յայնժամ հայեց· եւ քննէ, թէ ի ճշմարտութե· ես թէ ոչ: Այլ ինչ յերկար գրեցից· ամէնն ըստ ձեր կամացդ եղաւ· մեք քանի կարեմք բռնել զձեզ, երբ դուք ի մէնջ զփախչելն կու սիրէք, զոր խորամանկութ· հնարեցար եւ սիրոյ աղագաւ բաժանեցեր սբ· աթոռոյն եւ գլխոյն մերոյ :***

ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ· 11·

Բ· Գրքի եր· 259

Ձեռ· No. 1265/1275

1ա· *Ի խնդրոյ տն· Ստեփանոսի Սիւնեաց նահանգին վերայ գիտողի, արարեալ հաւաքումն մեկնութե· ածարան· մարգարէութեն· Եզեկիէլի երջանիկ վարդապետին Եսայեա Հայկազան տոհմի :***

(Յ)անձն առեալ ընկալա զայս հրաման քո ածաին· ըղձից, ով ամենասրբազան եւ քահանայապետական գլուխերդ (s!) *Ստեփաննոս, այցելու եւ վերատեսուչ գերահռչակ եւ առաքելական աթոռոյ տանդ Սիւնեաց, որ ի վերջին ժամանակիս այնքան գերազանցեալ ցուցար իմաստս գիտութե·, մինչ զի առաջնովքն ոչ չատացար ճոխանալ հանճարով, այլ եւ վերջնովքս հանդիսանաս պայծառանալ երկովք· որով եւ զմեզ գրաւեցեր հաւատով եւ սիրով· ըստ որում խոնարհին վէհքն ի նուաստքն, որպէս, ասի, Ած· ի մեզ· զի յաղթող զտանի բանականացն սէր եւ շաղկապ անլուծանելի, որպէս զի մոռացումն գործէ տկարութեն·/*

1բ· *եւ չարժէ զմեզ ի խնդիր միմեանց եւ ի տուրս· վս· զի դու կրկին բարգաւաճիս ճոխութբ·, ընդ հոգեւորին զմարմնականն ունիս լծակցեալ, որով եւ զմեզ ոչ միայն սիրով գրաւեցեր, զոր ունիս առ մեզ անբաղդատելի· այլ եւ իշխանական հրամանաւդ հնազանդեցուցեր· ուստի ամենայնիւ զտանիմ անճողոպրելի, տիրական (լուս· բնական) սիրով գրաւեալ եւ իշխանական հրամանաւ բռնադատեալ, որով մոռացեալ զիմս տկարութի· բուռն հարից զխնդրո· մխել ի մեկնութի· ածարան· մարգարէին Եզեկիէլի· եւ այս ոչ ընդ նուրբ եւ ընդ անկոխ ճանապարհս գնալով եւ կամ ջրհորս նորս բացեալ (լուս· փորելով), այլ սրբոց հարցն հետեւելով զխըցեալ եւ զծածկեալ զանձս նոցա բանալով, է զի եւ զտարածեալ եւ զայլուր զտեալս բանս նոցա հաւաքեալ ի մի: Իսկ անփոյթ եղելումն ի նոցունց լնումք ի մերոց ներածուեց· եւ այսպէս կարճ եւ համառօտ բանիւք անցցուք ընդ մեկնութի· մարգարէիս բան առ բան զճառսն յայտնելով եւ ոչ ընդարձակութի· ճառիցն տարածանել զմիտսն· զի թէպէտ ի սոյդ յայտնութենէ սորին նուաղիմք, սակայն ըստ իմ տկարութես· կատարեալ որպէս վարկանիմ: Իսկ ի ձերոց տեսողագոյն մտացդ ոչ միայն այսօքիկ լինիցին տեսեալք, այլ բազում ինչ յայտնագոյնք եւ ածայինք· (այլ մերս այսքան եւ եթ զի — լուսանցքի մէջ) ի ձեռն սասցելոցս որպէս վարկանիմ իբր աշտիճանաւք հըպել ձեզ առ գերագոյնն ճառագայթ, ընդ որս եւ զմեզ հաղորդ ունել մաղթեմ եւ ձերոց բացափայլ իմաստիցդ՝ լմամբ թերոյն եւ զսխալն ուղելով* (s!)*, ի ձեռն հարազատ սիրոյն: Քանզի հաւատացեալ գիտեմ, զի սակաւ սասցելովքս զմթերեալս ի ձեզ կայծակունս ածային· հրոյն խուզեալ յայտնեցից, որպէս զի ի ձեռն ամենեցուն փառաւորեսցի յայտնեալն եւ գովեալն ի բնաւիցն Ած· այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն :*

ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ· 12·

No. 1272/1311· *Բ· Գրքի* 267/8·

320բ· *Վերջաբանուի· Եսայեայ վարժապետի, որ էր ի Նիճ գաւառէ :*

Արդ ըս· հայցման հաճուե· բարեսէր կամաց երջանիկ եւ գերիմաստ նախասացեալ արհիականին, յօրինեալ չարադրեցի զտեսուի· ածաբան· մրգրէիս· Եզեկիէլի, կարճ եւ համառօտ տեսութ·: Ի թուիս Հայկազեան տոհմիս տովմարի ըս· հոլովման ամաց եօթն հարիւր յիսուն եւ երկուց, ի դառն եւ անբարի ժմնկիս·, որ տատանեալ ծփիմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ եւ արտաքուստ, որ ափչութի· գործէր տեսա–

---

*Այս երկու թղթերը, ինչպէս եւ մի ընդարձակ յիշատակարանաձեւ ժամանակագրութիւն, հեղինակ Յովհաննէս Ծարեցու ձեռքով, շեղագրով գրուած, թղթի վերայ $22\frac{1}{2}\times15$ սմ·, միջեան 15, $7\times11{,}8$ սմ·, եւ կցուած է բոլորովին տարբեր ձեռքով բոլորգիր ձեռագրին: Ձեռագրի վերջում, այս ժամանակագրութեան կցուած է Դոփեանց տան իշխանների պատկանող մի քանի արձանագրութիւնների պատճէններ, գրուած նոտրգրով :

**No. 1266/1276 1ա· Գիրք մեկնութեն· Եզեկիէլի մարգարէին· Արարեալ մեծի վրդտին· Եսայեայ, որ էր ի Նիճ գաւառէն եւ էր վրդպտ· մեծի Յօհաննու Որոտեցւոյն, ի թուին հայոց ՉԾ եւ Բ :